

## 77. ԾՈՒՌ ԱԽՊԵՐ

Կըլնեն էրկու ախպեր, մեյն խելացի, մեյն՝ ծուռ: Խելացի ախպեր կէլնի կով կուտա ծուռ ախպոր, կասի. - Տար արածա:

Ծուռ ախպեր ի, էրկու-իրեքյ օր վիրիրաց կտանի, մեկ օր էլ կտիսնա, որ քյառթաթեռշմ նստե վեր քյարին:

Կասի. - Սանախե՛ր, կով կառնե՞ս:

Քյառթաթեռշ գլլխով կանի:

- Գյինը խինգյ մաչիտիե ի, կառնե՞ս:

Քյնռթաթեռշ գլլխով կանի:

- Դե՛, փարեն տուր:

Քյառթաթեռշ գլլխով կանը:

- Էսօր փարա չկա՞: Էսօր էրթամ, վառ գյամ:

Քյառթաթեռշ գլլխով կանի:

Ծուռն ի, կով կթողնի դան, կուգյա տուն:

Ախպոր կասի. - Կով ծախիցի մեր սանախոր:

- Քյանի՞ տվիցիր:

- Տվեցի խինգյ մեչիտիե:

Խելացի ախպերն ի կասի. - Վա՛յ, ասպած քյո տուն ավերի: Ի՞նչխ էն կով տվիր խինգյ մաչիտիե:

Ու՞ր է փարեն:

Ծուռ ախպերն ի, կասի. - Է, ի՞նչ կասես, սանախոր փարա չկեր էսօր, ասաց՝ վառն արե տար: Վառ կէրթամ փարեն կպիրեմ:

Էն մեկել օր կէլնի կէրթա ծուռ ախպեր, տիսնա որ առչեր, գյելեր կով թալեր են գյետին, փռռփռթեր են:

Քյնռթաթեռշն էլ էլմ էլե նստե վեր քյարին կտայրնա:

- Սանախե՛ր, - կասի, - իմ փարեն կուտա՞ս:

Սանախեր գլլխով կանի:

- Էսօ՞ր էլ էրթամ վա՞ռ գյամ:

Էլմ գլլխով կանի:

Կէրթա, էն մեկել օր կուգյա:

Տիսնա, որ քյառթաթեռշ էլմ նստե վեր էն քյարին:

- Սանախեր, իմ փարեն տուր:

Սանախեր գլլխով կանի:

- Հա՛յ, ես քյի պես սանախոր. - կասի, կոպալ կքյաշի, կէրթնի տեխ քյառթաթեոշ, - խերիքյ չի՞ զի խապես: Հնի էսօր կնի, վնղն արե՛յ, ղե իմ փնրեն կուզեմ:

Քյնռթաթեոշ կփախնի կմտնի քյարի տակ: Ծուռ կզննի քյար կշռնի: Կտիսնա, որ գյուգյումով ոսկին քյարի տակ խորուկ ի:

Կուգյն ախպոր կասի. - Ախպե՛ր, ախպե՛ր, շվնլ տու տանեմ, մեր կովու գյին լցեմ ինե պիրեմ:

Ախպերն ի, շվնլ կուտա ծուռ ախպոր: Ծուռ ախպեր կառնի, կէրթնի սար, գյուգյում կէճյուցի ինե, կառնի կուգյն:

Սանախոր իշունց տալեն, կպիրի մեջ գյեղեն: Ըռես տանես կայնուկ կէլնի. կտիսնա, կխարցուցի, կասի. - Էտա ի՞նչ ի կպիրես:

Կասի. - Մեր կովու գյին էր:

Ըռես կուգյն ինոնց տուն, կասի. - Պերեքյ մեյտեղ կիսենքյ, թե չէ՝ կէրթամ թակավորուն կասեմ, թե քյո խողի մեջ խազինա են կնդե: Թակավոր կուգյն ծեր ծեռնից կառնի:

Ծուռ ախպերն ի, կզննի ըռես կսպանի, կթնլի ճրի խոր: Վնզեվնզ կէրթնի խելացի ախպոր խնբնր կտանի, թե ըռես ըսպանեցի, թալիցի խոր:

Խելացի ախպերն ի, կմտածի, կասի՝ ի՞նչխ անեմ, ի՞նչխ չանեմ, պիրի ծուռ ախպեր կխճի թոներ, չոր փութ կթնլի վեր թորվան պենին, գյնրին կթնլի վեր փութին, խավեր կկանչի վերեն, խավեր կտկտալեն գյնրի կուտեն:

Ծուռ կխարցուցի, կասի. - Ախպեր, էսա ի՞նչ ի:

Կասի. - Աստծու սիրուն, էտա տեղ կաց, մէլնե տյուս, քյարե կարկուտ կուգյն:

Խելացի ախպերն ի, կէլնի ըռես խորից կխանի, էծմ կմորթի, կթնլի խոր: Ըռես կտանի ուրիշ տեղ կխորի:

Խավեր կուտ կուտեն կպրծնեն; խելացի ախպեր կէրթնի ծուռ ախպոր թորվնից տյուս կխանի:

Ըռեսի լաճերն են, կասեն:

- Հայ, ճավար: Ըռես կուրիսե, ըռես կուրիսե, վո՞վ ըռեսից խաբար ի, թռ սալախ տա:

Ծուռ ախպերն ի, կասի. - Ես ծեր ըռես ըսպաներ եմ, թալեր եմ մեր խոր:

Ըռեսի լաճերն ի, կասեն. - Ե՞փ ես սպանե:

Կասի. - Էնօր, որ քյարե կարկուտ կուգյեր:

Կէրթան խելացի ախպորն կխարցուցեն:

Կասի. - Ջա՛նմ, վազ կացեքյ, էն ծուռ ի, ծե ի՞նչ էլավ, խո տյուք էլ ծուռ չեքյ, քյարե կարկուտ եփ ի իկե, որ էն էնօր ըռեսն ըսպանե:

Ծուռ ախպերն էն ղեճեն կասի. - Ցա ընչի՞ սուտ կասես, ես քյարե կարկտի օր ըռես չսպանեցի՞ թալեցի մեր խոր:

Ըռեսի լաճն ի, կասի. - Ջա՛նմ, ծուռ, ծուռ, մե խատ էճուցենքյ խոր, բալքյի ըսպաներ ի, խենքյ ի՞նչ կխանի տյուս:

Կպիրեն ծուռ ախպեր կէճուցին խոր:

Ծուռ ախպեր կափլփի, էծ կինի ծեռ:

Կբոռա խորի մեջեն, կասի. - Ծեր ըռես մազո՞վ ի, թե անմազ:

Կասեն. - Ջա՛նմ, խան տյուս տիսնանքյ:

Մեկէլ կափլփի-կափլփի, կուտոշ կինի ծեռ, կասի. - Ծեր ըռես կուտշո՞վ ի, թե՞ անկուտոշ:

Մեկէլ կափլփի-կափլփի, մուրուս կինի ծեռ, կասի. - Ծեր ըռես մուրուսո՞վ ի, թե՞ անմուրուս:

- Ջա՛նմ. խան, խենքյ:

Մեկ Էլ կափլփի-կափլփի, չորս ոտ կինի ծեռ:

Կասի. - Ծեր ըռեսին չո՞րս ոտ կա:

Մեկ Էլ կափլփի-կափլփի, կասի. - Ծեր ըռես պոչո՞վ ի, թե անպոչ:

Կասի. - Ջա՛նմ, խան, խենքյ:

Խեղացի ախպեր կասի. - Ջա՛նմ, վազ կացեքյ ինորմենեն, ի՞նչ կուզեքյ Էսա ծռուց:

Էծն կխանի տփի տյուս, կասի. - Առե՛քյ ծեր ըռես:

Ըռեսի լաճերն կշիվարին կմնան:

Խեղացի ախպերն կասի. - Տեսա՞քյ, ես ծե չա՞սի՝ իսա ծուռ ի, իսոր խաբրին մե՛քյ ավատա:

Ըռեսի տղեյներն ի, փեռր-փեռշման, կթողնեն, կէրթան:

Խեղացի ախպեր նոր կառնի ուր ծուռ ախպեր կնստեն, կուտեն Էտա փնճրեն:

